ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ ԿԳՄՍՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ՝ Աշակերտների ներգրավվածության ապահովումը տարբերակված թեստային առաջադրանքներով

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Վարդենիս

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Համլիկ Բեյբության

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Նունե Ավետիսյան

ԴՊՐՈՑ՝ Կարճաղբյուրի միջնակարգ

ՎԱՐԴԵՆԻՍ-2022

Բովանդակություն

Ներածություն........................................................................................3

ԳԼՈՒԽ 1Աշակերտների ներգրավվածության ապահովումը տարբերակված թեստային առաջադրանքներով

1.1Ժամանակակից լեզվական կրթության և օտար լեզուների առանձնահատկությունները..................................................................4

1.2Տարբերակված ուսուցման նպատակները......................................................6

ԳԼՈՒԽ 2 Փորձարարական հետազոտություն

2.1Փորձարարական դասեր...................................................................9

2.2Փորձարարական դաս-1.....................................................................9

2.3Փորձարարական դաս-2.....................................................................11

Եզրակացություն.......................................................................................13

Գրականության ցանկ...............................................................................14

1.Դասապլան-1.........................................................................................15

2.Դասապլան-2..........................................................................................21

# Ներածություն

Օտար լեզուները մայրենի լեզվի հետ միասին կազմում են բանասիրության հանրակրթական ոլորտը, որոնք շփման և հաղորդակցման, ինչպես նաև տարբեր մշակույթների փոխազդեցության կարևորագույն միջոցն են։

Օտար լեզուն, որպես ուսումնական առարկա, նպաստում է սովորողների ընդհանուր կրթությանը, զարգացնում նրանց ճանաչողական կարողությունները, խոսքն ու մտածողությունը։ Սովորելով օտար լեզուն՝ դպրոցականները նախնական պատկերացումներ  են ձեռք բերում տվյալ լեզվի մասին, ըմբռնում որոշ առանձնահատկություններ, որոնցով այն տարբերվում է մայրենի լեզվից, ինչը նպաստում է սովորողների ինչպես բանասիրական մտահորիզոնի ընդլայնմանը, այնպես էլ  մայրենի լեզուն ավելի լավ հասկանալուն։

Օտար լեզվի տիրապետումը նպաստում է նաև աշխարհագրությունից, պատմությունից, գրականությունից սովորողների կոնկրետ  պատկերացումների հարստացմանը։

Օտար լեզուները ընդլայնում են  սովորողի աշխարհայացքը,  նպաստում է հաղորդակցման  և հանրամշակութային կարողությունների ձևավորմանը, լեզվական  նորմերի ընկալմանը և գիտակցմանը, ինչպես նաև աջակցում են սովորողների  ընդհանուր  խոսքային կարողությունների զարգացմանը։ Այս ամենը նպաստում է դպրոցականների  լեզվաբանական կրթության  հիմունքների ձևավորմանը։

Օտար լեզվով շփումը կարգավորում է անհատի վարքը, խթանում այս կամ այն խոսքային գործունեությունը, համագործակցությունը։ Այն նպաստում է անձնավորության  արժեքային <<կողմնորոշիչների>>, հայացքների և համոզմունքների ձևավորմանը, ծառայում է սովորողի վարքի և փոխհարաբերությունների, խոսքային կարողությունների զարգացմանը, ինչը դրսևորում է խոսքային էթիկայի նորմերի պահպանման միջոցով։

# ԳԼՈՒԽ 1 Աշակերտների ներգրավվածության ապահովումը տարբերակված թեստային առաջադրանքներով

## ***1.1***Ժամանակակից լեզվական կրթության և օտար լեզուների առանձնահատկությունները

Ժամանակակից լեզվական կրթության և օտար լեզուների ուսուցման առանձնահատկություններն  են.

✔ Միջմշակութայնությունը–հնարավորություն է տալիս դպրոցականին
իրավահավասար գործընկեր լինել ռուսաց լեզվով միջմշակութային հաղորդակցության  գործընթացում

- Միջառարկայնությունը–ռուսաց լեզվով ձեռք բերել գիտելիքներ տարբեր առարկաներից՝ գրականությունից, մաթեմատիկայից, արվեստից, աշխարհագրությունից և այլն
- Միջառարկայական ինտեգրում–ռուսաց լեզվի և մյուս առարկաների ինտեգրումը և միջառարկայական կապերը նպաստում են սովորողների կողմից աշխարհի և երևույթների միասնական ընկալմանը, տարբեր բնագավառներից գիտելիքներ և գաղափարներ համադրելը
- Բազմամակարդակությունը–ձևավորել հմտություններ ռուսաց լեզվով գրելու, կարդալու, խոսելու, ունկընդրելու
- Բազմագործառնություն–կարող է հանդես գալ և՛ որպես ուսուցման նպատակ, և՛ որպես միջոց ձեռք բերել գիտելիքներ տարբեր բնագավառներից

Ռուսաց լեզվի ուսուցման հիմնական նպատակներն են.

- Յուրաքանչյուր սովորողի համար պարտադիր գիտելիքների ցանկ
- Լեզվական կարողությունների և հմտությունների տիրապետում
- Սովորողների հոգևոր ոլորտի զարգացում
- Ընդլայնել սովորողների հաղորդակցվելու և համագործակցելու կարողությունները

Ռուսաց լեզվի ուսուցման հիմնական հեռանկարային նպատակը սովորողներին բազմազգ և բազմամշակութային, ժողովրդավարական հասարակության մեջ ապրելուն և գործունեություն ծավալելուն նախապատրաստելն է:

Քանի որ միջին դպրոցում աշակերտների համար մի փոքր դժվար է ամբողջովին յուրացնել ռուսաց լեզվի ուսումնական ծրագրերը, հատկապես միջին և ցածր կարողությունների տեր աշակերտների համար, այդ իսկ պատճառով ես որոշեցի իմ դասաժամերին այդ աշակերտների համար կիրառել տարբերակված ուսուցում մեթոդը՝ ապահովելով նրանց ներգրավվածությունը ռուսերենի դասաժամերին: Այն աշակերտները, որոնք հետ են մնում կրթական ծրագրերից և ունեն խնդիր դասապրոցեսին մասնակցելու՝ նրանց կշտատենք անհատական տեսքստային առաջադրանքների վրա՝ զարգացնելով ճիշտ գրելու հմտություններ, ճիշտ արտասանություն և կցուցաբերեն հետաքրքրություն առարկայի հանդեպ:Ներկա ժամանակներում դպրոցներում լայնորեն կիրառում են տարբերակված ուսուցումը՝ որպես նորարարություն , որը հնարավորություն է տալիս բարելավել յուրաքանչյուր ուսումնառողի կրթական կարիքները՝ իր ունակությունների, շահերի և հնարավորությունների սահմաններում: Տարբերակված ուսուցում կիրառում են ոչ միայն այն դեպքում, երբ աշակերտներին առանձնացնում են ըստ ունակությունների, այլ նաև այն դեպքում, երբ նրանք չեն կարողանում լիովին յուրացնել

ուսումնական ծրագրերը: Ուսումնառություն կազմակերպելիս պետք է հաշվի առնել ուսումնառության ոճերը: Օրինակ՝ մաթեմատիկական և արվեստի ուղղվածություն ունեցող դպրոցական աշակերտներին խնդրեցին վերարտադրել տարբեր տառատեսակներով և գույներով թվեր: Մաթեմատիկները վերարտադրեցին միայն թվերը, իսկ արվեստագետները՝ գույները և տառատեսակները: Դա է պատճառը, որ նույն նյութն հաղորդելիս պետք է ընտրել տարբեր գործիքներ[1]:

Տարբերակված ուսուցման ժամանակ ուսուցիչը հնարավորություն ունի ճշգրիտ կերպով կազմակերպել դասապրոցեսը՝ հաշվի առնելով դասապրոցեսի բոլոր էլեմենտները: Տարբերակված ուսուցում կարելի է կազմակերպել երկու եղանակով՝ խմբային և անհատական: Խմբային տարբերակման ժամանակ սովորողները առաջադրանքները լուծում են երեք – չորս հոգով ( խմբերով ), իսկ երկրորդ դեպքում՝ աշխատում են անհատապես: Երկու դեպքում էլ սովորողին տրվում է հետադարձ կապ՝ մի դեպքում խմբի համար, իսկ մյուս դեպքում՝ ստուգվում է յուրաքանչյուր սովորողի աշխատանքը[2]:

Տարբերակված ուսուցման նպատակները.

Տարբերակված ուսուցման ժամանակ յուրաքանչյուր դասարան կարելի է բաժանել 4 տիպաբանական՝ A Б B և Г խմբերի :

A խմբում սովորում են <<օժտված տաղանդավոր>> աշակերտները: Б խմբում՝ լավ գիտելիքներ և առաջադիմություն ունեցողները: Այս երկու խմբերի համար տարբերակված ուսուցումը ունի հետևյալ նպատակները.

- ✔ Գիտելիքների խորացում
- ✔ Բարդ խնդիրներ լուծելու հմտության զարգացում
- ✔ Անհատական հմտության զարգացում
- ✔ Գիտական գրականությունից ինքնուրույն օգտվելու զարգացում

B խմբում սովորում են բավարար գիտելիքներ ունեցողները, իսկ Г խմբում՝ նվազագույն շեմը չհաղթահարողները: Վերջիններիս համար տարբերակված ուսուցման նպատակներն են

- ✔ Կրկնություն, նոր թեմայի յուրացում՝ հաջորդ աշխատանքը գրելու համար
- ✔ Աշխատանքային հմտությունների զարգացում, ինքնուրույն աշխատելու հնարավորություն

[1] Зарецкий В.К. Москва:
[2] *Климова Н.В 2009*

- ✔ Խաղերի օգնությամբ հետաքրքրության առաջացում, տրամաբանական առաջադրանքների ինքնուրույն լուծում
- ✔ Վերարտադրել սովորած նյութը կամ լուծված խնդիրը
- ✔ Նվազագույն գիտելիքների յուրացման շեմը ներկայացնելու հմտություն

Տարբերակված ուսուցման դրական և բասացական կողմերը.

Տարբերակված ուսուցումը ունի իր դրական և բացասական ազդեցությունը սովորողների վրա [3]Աշակերտների տարբերակումը ուժեղ, միջին և թույլ առաջադիությունների ունի ոչ միայն առավելություններ, այլ նաև թերություններ: Հագեցած դասերը, ծանր ուսումնական նյութերը խթանում են շնորհաշատ աշակերտներին, իսկ այն աշակերտները, որոնք ունեն դանդաղ զարգացման տեմպ. այս պարագայում սովորելու ցանկությունը կորցնում են, և ուսումնառությունը դառնում է ծանր պարտականություն: Ի. Ս. Յակիմանսկին կարծում է, որ ուսուցման սկզբնական շրջանում անհրաժեշտ է ստեղծել երեխայի զարգացման համար այնպիսի միջավայր, որտեղ նա իրեն կդրսևորի իր կարողությունների բոլոր կողմերով և 7-8-րդ դասարաններում, երբ հստակ երևում է սովորողների ընդունակությունները, կարելի է կիրառել տարբերակված ուսուցում՝ տարբեր մակարդակներով:

Բայց այստեղ ի հայտ է գալիս մեկ այլ խնդիր : Միևնույն դասարանում տարբեր առաջադիմության տեր աշակերտների հետ աշխատելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի.

- ✔ Արդյո՞ք շատ են բացակայել դասերից
- ✔ Աշխատում են նույն թե տարբեր զուգընկերների հետ
- ✔ Ինչպիսի՞ հաջողություններ են գրանցել ուսումնառության մեջ:

Տարբերակված ուսուցման ժամանակ, երբ ուսուցիչը ուշադրության կենտրոնում է պահում միջին առաջադիմության տեր աշակերտներին՝ ուժեղների նկատմամբ կիրառելով տարբերակված ուսուցում, անհաղթահարելի խնդիր է առաջանում թույլերի նկատմամբ: Տարբերակված ուսուցման խնդիր չի լինի, եթե տարրական դպրոցից սկսած միևնույն առաջադիության տեր աշակերտները սովորեն նույն խմբում, իսկ մնացածները՝ մեկ այլ խմբում: Այս պարագայում նրանցից յուրաքանչյուրն իրեն լավ կզգա իր նմանների մթնոլորտում (:

Հաշվի առնելով կրթական կարիքները՝ տարբերակված ուսուցում իրականացնում են նաև կազմակերպչական ռազմավարությունից ելնելով՝ միևնույն ունակությունների տեր աշակերտներին

---

[3] Зинудин А. А. 2004:

նույն հոսքում ուսուցանելով ։ Այս տարբերակումների իմաստը ընդհանուր ունակությունների գաղափարն է: Այսպես, օրինակ, արտասահմանյան շատ երկրներում կան թեքումով դպրոցներ (օրինակ՝ լեզուների թեքումով դպրոց, որտեղ խորացված ուսումնասիրում են ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, պարսկերեն և այլն), որտեղ հենց նշված առարկաների խորացված ուսուցում է կազմակերպվում: Արտասահմանյան երկրներում տարբերակված ուսուցման հիմքում ընկած է այն պնդումը, որ մարդու ընդունակությունները պայմանավորված են ընդունակության գործոնով, և սովորելու ժամանակ կարևոր է ուսումնառողի մտածողությունը, այլ ոչ թե նրա հիշողությունը և ուշադրությունը: Այս հայեցակարգից ելնելով՝ շատ մանկավարժներ սովորողների մտավոր ունակությունները բացահայտելու համար դիմում են թեստերի օգնությանը: 20-րդ դարում առաջին անգամ թեստեր մշակել են հոգեբան Ա. Բինեն և բժիշկ Տ. Սիմոնը, որոնք մշակել են նաև հատուկ սանդղակ ՝ առաջադիմությունը չափելու նպատակով: Թեստերի օգտագործումը հետագայում լայն կիրառում և տարածում ստացավ շատ երկրներում :Այս երկրներում, երբ երեխան գալիս է դպրոց, սովորողներին տարանջատում են խմբերի՝ ըստ ցուցաբերած ունակությունների: Անհրաժեշտ է նշել, որ դասի նպատակների և ուսումնառության վերջնարդյունքների արժևորման դեպքում անհրաժեշտ է հստակեցնել գնահատման չափանիշները: Տարբերակումը ձևավորվում է նաև ձևավորող գնահատում հետադարձ կապից ։

## ԳԼՈՒԽ 2 Փորձարարական հետազոտություն

### 2.1

Խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուրի միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանում, քանի որ այս դասարանում սովորողների մի մասը չի ներգրավվում դասապրոցեսին: Այդ իսկ պատճառով ես որոշեցի այդ աշակերտների նկատմամբ կիրառել

անհատական տարբերակված ուսուցում, ինչը կնպաստի նաև զարգացնել նրանց մոտ տեքստերի հետ ճիշտ աշխատելու հմտությունները, դառնալ ավելի ինքնուրույն և հետ չմնալ ուսումնական ծրագրերից:

Այս դասարանում սովորում են 14 աշակերտ՝ 8 աղջիկ և 6 տղա, որոնք ունեն տարբեր առաջադիմություն և հմտություններ: Ռուսերեն անցնում են շաբաթական 3 ժամ: Այս դասարանում ես փորձարական դաս չեմ անցկացրել, քանի որ 4-րդ տարին է , որ այս դասարանում դասավանդում եմ ռուսերեն առարկան և շատ լավ գիտեմ յուրաքանչյուր աշակերտի հմտությունն և կարողությունն այս առարկայից: Այս դասարանի հիմնական խնդիրն է աշակերտների ներգրավվվածությունը դասապրոցեսի մեջ, ինչը պատճառ դարձավ, որ ես իմ հետազոտական աշխատանքը իրականացնեմ միջին կարողությունների տեր 2 աշակերտների համար կազմակերպել տարբերակված ուսուցում անհատական թեստերի միջոցով, իսկ մնացած աշակերտների հետ կկատարենք տարբեր բնույթի աշխատանքներ՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի կարողությունները և հմտությունները:

Փորձարարական դաս-1

Այսօրվա դասը վերաբերում էր « Բայի ներկա ժամանակ»-ին (տե՛ս դասապլան-1 էջ՝ 16): Դասաժամն սկսվեց տնային աշխատանքի ստուգումով. բոլորը ներկայացրին իրենց տնային աշխատանքները ՝ որոշակի սխալներով: Քննարկվեց տնային աշխատանքի սխալները , տրվեց բանավոր հետադարձ կապ:

Հարցադրումներով սկսվեց դասը: Ամփոփեցինք բայի ներկա ժամանակի մասին իրենց գիտելիքները , որպեսզի ստուգվեին աշակերտների ձեռք բերած գիտելիքները անցած թեմայի վերաբերյալ: Աշակերտները պատասխանեցին առաջադրված հարցադրումներին իմ ուղղորդող հարցերի օգնությամբ, այնուհետև գրատախտակը բաժանվեց 4 մասի:Գրատախտակին գրվեցին տարբեր նախադասություններ և 4 աշակերտ սկսեցին աշխատել գրատախտակի մոտ՝ ընդգծելով բայերը:Մնացած աշակերտները աշխատում էին իրենց տետրերում՝ հնչեցնելով իրենց համար անհասկանալի հարցերը:

Դասը քննարկելուց և ամփոփելուց հետո 2 միջին առաջադիմության տեր աշակերտները գրեցին տարբերակված թեստային աշխատանքներ (տե՛ս դասապլան-1 էջ 16), բաժանվեցին թեստային առաջադրանքները, բացատրվեց հանձնարարությունը: Աշխատանքն աշակերտներին ծանոթ էր, քանի որ մինչ այդ դասարանում տարբեր առաջադիմության տեր աշակերտները կատարել էին նման աշխատանքներ: Տարբերակված թեստերը երկու տարբերակով էին, որոնք բաժանվեցին աշակերտներին անհատապես աշխատելու համար: Մնացած աշակերտների հետ դասը շարունակվեց վարժությունների լուծումով:

Բարձր առաջադիմության տեր աշակերտները դասագրքից գրեցին 8-րդ վարժությունը, իսկ ցածր առաջադիմության տեր աշակերտները գրեցին դասագրքի վերջում տրված վարժությունը, որոնք գրեցին տետրերում, թարգմանեցին, ինչպես նաև արտասանեցին: Աշխատանքների իրականացման ժամանակ բոլոր աշակերտներին տրվեցին ուղղորդումներ, նաև բանավոր հետադարձ կապ: Իմ ուշադրության կենտրոնում մնացել էին հիմնականում ցածր առաջադիմություն ունեցող աշակերտները, քանի որ նրանք հետ են մնում ուսումնական ծրագրերից:

Տարբերակված թեստային առաջադրանքներ գրող յուրաքանչյուր աշակերտի հաջորդ դասին կտրամադրվի գրավոր և բանավոր հետադարձ կապ անելիքների և կատարած գործողությունների վերաբերյալ:

Տարբերակված թեստերը հավաքելուց հետո հաղորդվեց նոր թեման: Նոր դասը վերաբերվում էր ներկա ժամանակի ամրապնդմանը, որը հաղորդվեց աշակերտներին կարճ դասախոսությամբ՝ ստեղծելով միջառարկայական կապ հայերենի հետ: Դասի հաղորդման ժամանակ աշակերտները հնչեցրին իրենց համար անհասկանալի հարցերը, տրվեց լրացուցիչ բացատրություններ:

Դասն ավարտվեց տնային աշխատանքի հանձնարարումով. 1 վարժություն ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների համար և մեկ վարժություն միջին և բարձր առաջադիմություն ունեցող աշակերտների համար: Այս դասի տարբերակված թեստային առաջադրանքների արդյունքները կներկայացնեմ »դասապլան-2-ում»:

## Փորձարարական դաս-2

Այսօրվա դասի թեման էր «Թվականները» : Թեման բավականին մատչելի էր և հեշտ ընկալվող այդ իսկ պատճառով թեման ամբողջովին հաղորդվեց աշակերտների մասնակցությամբ: Նոր դասը սկսվեց տնային աշխատանքի ստուգումով, ինչին հաջորդեց նախորդ դասաժամին գրված տարբերակված թեստերի քննարկում:

Տարբերակված թեստային աշխատանք գրող 2 աշակերտ կարողացել էին հաղթահարել թեստի միայն մի վարժությունը սխալներով, իսկ 4 աշակերտ թեստը գրել էին ամբողջությամբ, բայց դարձյալ սխալներով: Դասի ընթացքում բացատրվեց բոլոր սխալները, տրվեց լրացուցիչ բացատրություն ինչպես իմ, այնպես էլ մի քանի բարձր առաջադիմություն ունեցող աշակերտների կողմից: Աշակերտները նշեցին, որ այս ոճի դասի

անցկացումը իրենց դուր եկավ, քանի որ այսպիսի դասերը ավելի արդյունավետ են, քանի որ ստանում են ինչպես նոր գիտելիք, այնպես էլ ամբողջ դասարանն է մասնակցում դասապրոցեսին՝ ապահովելով ամբողջ դասարանի ներգրավվածությունը: Թեստերն հանձնելուց աշակերտները դժգոհեցին , որ այսպիսի աշխատանքի համար նախատեսված ժամանակը մի փոքր քիչ էր:

Տարբերակված թեստերը քննարկելուց հետո հաղորդվեց նոր դասը, որը վերաբերվում է «Թվականներին»: Թեման լինելով բավականի մատչելի՝ այն հաղորդվեց հարցադրումների մեթոդով(տես դասապլան-2), ինչը և հնարավորություն տվեց ինձ ներգրավվել գրեթե բոլոր աշակերտներին դասապրոցեսի մեջ: Թեման ամրապնդելու, ինչպես նաև ամփոփելու նպատակով դարձյալ 6 միջին առաջադիմություն ունեցող աշակերտների բաժանվեց 2 տարբերակով տարբերակված թեստեր(տես դասապլան-2, ՝), բարձր առաջադիմություն ունեցող աշակերտների հետ գրվեց 2 բարդ վարժություններ, իսկ ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների համար գրատախտակին գրվեց տարբեր թվականներ, որոնք բառարանի միջոցով թարգմանեցին, կատարեցին նշումներ տետրերում և արտասանեցին: Թեման ամփոփելու համար յուրաքանչյուր աշակերտ կազմեց 1 նախադասություն իր իսկ կողմից ընտրված թվականով՝ իր կարողությանը համապատասխան: Հավաքվեցին թեստերը, հանձնարարվեց տնային աշխատանք:

## Եզրակացություն

Աշակերտների ներգրավվածությունը ապահովելու համար՝ անցկացվեց 2 տարբերակված դասեր, որի ժամանակ 2 միջին առաջադիմության տեր աշակերտներ կատարեցին անհատական տարբերակված թեստային առաջադրանքներ՝ 2 տարբերակներով: Ամեն հաջորդ տարբերակված դասաժամին ամբողջ դասարանի համար քննարկվեց տարբերակված թեստերի սխալները, տրամադրվեց բանավոր և գրավոր հետադարձ կապ: Իմ ուշադրության կենտրոնում եմ պահել հիմնականում միջին և ցածր առաջադիմության առաջադիմություն ունեցող աշակերտներին, որն էլ պատճառ հանդիսացավ նրանց ներգրավվածությանը դասապրոցեսին, ինչպես նաև նրանց հնարավորություն տրվեց ձեռք բերել ինքնուրույն աշխատելու հմտություն (ցածր կարողության տեր աշակերտներին նաև աշխատանք բառարանի հետ): Աշակերտները խոստովանեցին, որ բանավոր տրամադրված հետադարձ կապը ավելի արդյունավետ է:

Վերլուծելով հետազոտական դասերի արդյունքները, եկա այն եզրակացության, որ ներգրավվածության բարձրացումը պայմանավորված է հետևյալ գործոններով.

1.տարաբնույթ տարբերակված վարժությունների կատարում տարբեր առաջադիմություն ունեցող աշակերտների համար

2.հարցադրումներ և տարբերակված ուսուցում մեթոդների կիրառում դասաժամերին

3.գրավոր և բանավոր հետադարձ կապի տրամադրում

4.տարբերակված թեստային առաջադրանքների լուծում և քննարկում

5.թեմայի հիշեցում, ամրապնդում և ամփոփում՝ անհատական գրավոր աշխատանքների միջոցով

## Գրականության ցանկ

1.Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս. ,,Մանկավարժություն,,

2.Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր՝ <<Ռուսաց լեզու>> 2007

3.Зинудин Абасович Абасов ,, Дифференциация обучения : сущность и формы,, Журнал директор школи 2004

4.Зарецкий В. К. ,,Проблемы дифференцированнога обучения и возможности интегразии,, ИПИ, Москва

5.Климова Н. В. Учитель информатики и ИКТ МОУ <<Шверцвбская СОШ>> ,,Дифференцированный подход в обучении информатике,, 2009

**Դասապլան–1**

Ուսուցիչ՝ Նունե Ավետիսյան

| Առարկա | Ամսաթիվ | Կիսամյակ | Դասարան |
|---|---|---|---|
| Ռուսաց լեզու ՝ | **19.07.2022** | I | **6** |

| | |
|---|---|
| Թեմա՝ | Ներկա ժամանակ |
| Օգտագործվող նյութեր՝ | Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, թեստեր, բառարան |
| Դասի նպատակը՝ | Իմանալ ներկա ժամանակի կազմությունը հայոց լեզվից<br>Հասկանալ–ժամանակաձևի կազմությունը ռուսերենում<br>Իմանալ–ներկա ժամանակի խոնարհումը |
| | Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի |
| Վերջնարդյունքները | Աշակերտները կկարողանան.<br>Թվել ներկա ժամանակով դրված բայեր օգտագործել նախադասությունների մեջ<br>Դուրս բերել–տեքստից ներկա ժամանակով բայերը<br>Կազմել նախադասություններ դուրս բերված բայերով |

| Գործողություններ(ժամ/տևողություն) | Ուսումնական գործունեություն<br>Աշակերտներ | Ուսումնական գործունեություն<br>Ուսուցիչ | Հարցադրումներ | Կիրառվողմերոդ (ներ) |
|---|---|---|---|---|
| 5րոպե–սկիզբ | Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին:<br>Ներկայացնել տնային աշխատանքները<br>Պատասխանել հարցերին<br>Փոխադարձ հարցեր տալ, փակ հարցերին պատասխանում են ,,ցածր,, | Ողջունել դասարանին, ն/բ:<br>Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը | 1.Ի՞նչ է ցույց տալիս ներկա ժամանակը հայերենում<br>2.Ինչպե՞ս է արտացոլվում այդ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **10**րոպե–ընթաց f | առաջադիմություն ունեցող աշակերտները՝ ստեղծելով ,,հավելյալ,, արժեfներ<br><br>**4** աշակերտ կատարում են առաջադրանfները գրատախտակին, մյուսները կատարում են նշումներ տետրերում<br><br>Տարբերակված ուսուցում **А Б В Г Д** աշակերտների նկատմամբ<br><br>Բարձր առաջադիմության տեր աշակերտները կատարում են աշխատանf դասագրfից, իսկ ցածր առաջադիմության տեր աշակերտները դասագրfի վերջից դուրս կբերեն **5** | Տալ հարցադրումներ, աշակերտներին ներգրավել դասապրոցեսին<br><br>Տալ ուղղորդող հարցադրումներ<br><br>Գրատախտակը բաժանել **4** մասի, գրել տարբեր նախադասություններ,առաջարկելով ընդգծել բայերը<br><br>Հետևել կատարվող աշխատանfներին, կատարել շտկումներ | ժամանակաձևը ռուսերենում<br><br>3.Որո՞նf են ռուսերենում ներկա ժամանակի վերջավորությունները<br><br>4.Ի՞նչ նման ժամանակաձև գիտեf ներկա ժամանակաձևի հետ կապված<br><br>5.Ի՞նչ է հուշում ձեզ ներկա<br><br>6.Ինչպե՞ս է կազմվում ներկա ժամանակաձևը<br><br>Տարբերակված թեստերը կներկայացնեմ դասապլանի վերջում, որոնf **2** տարբերակով են<br><br>էջ **18** վարժ. **8** | Հարցադրումների մեթոդ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **15**րոպե | անկանոն բայ, կթարգմանեն և կարտասանեն<br><br>Լուռ լսել դասը , կատարել նշումներ, հնչեցնել անհասկանալի հարցեր, աշխատանք դասագրքի հետ | Բաժանել թեստերը, բացատրել հանձնարարությունները<br><br>Հետևել կատարվող աշխատանքներին, տրամադրել անհրաժեշտության դեպքում առաջ մղող անհատական բանվոր, գրավոր հետադարձ կապ:<br><br>Հավաքել տարբերակված թեստերը | | Տարբերակված ուսուցում |
| **12**րոպե | | Նոր թեմայի հաղորդում, բանավոր հետադարձ կապի տրամադրում, անհասկանալի հատվածների բացատրություն | | Կարճ դասախոսություն՝ստե ղծելով միջառարկայական կապ(հայոց լեզու) |
| **3**րոպե-ավարտ | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Գնահատում և տնային աշխատանքի հանձնարարում | | |
| Տնային աշխատանք | էջ *18* վարժ. 7 և *8* | | | |

**ТЕСТ 1**

***1. Прочтите текст и подчеркните глаголы в настаящем времени.***

Джон посмотрит в окно. Он постучает в дверь. Мэри открывает дверь.

Джон войдет в класс. Мэри закрывает дверь.. Джо чистит доску. Учитель улыбается. Джон  сидитна свое место.

**2.Допишите окончания глаголов в настоящем времени.**

1. Когда ты уч.. уроки? Обычно я готовл.. уроки вечером. 2. Кому ты сейчас звон..? - Я не звон.., я чита... 3. Куда ты спеш..? - Я спеш.. в школу. 4. Ты люб.. читать? - Да, очень любл.. .

**ТЕСТ-2**

**1.Прочтите текст и подчеркните глаголы в простом настоящем времени.**

**Как сделать торт**

Когда мама делает торт, я помогаю ей. Сначала она берет горшок и кладет в него чашку сахара и чашку масла. Затем она берет два яйца и смешивает их с сахаром и маслом. Затем она берет чашку муки и хорошо ее перемешивает. Иногда она тоже кладет туда фрукты. Затем

она кладет все в форму для торта. Сначала она натирает внутреннюю часть банки маслом. Она печет торт три четверти часа. Когда торт готов, мы все помогаем ей его съесть. Мама готовит очень хорошие торты.

А теперь попробуйте приготовить такой торт. Тебе понравится. Помогите маме!

**2.Завершите предложения, используя простое настоящее или продолженное настоящее.**

Я мою руки каждый день, но теперь я……… мои руки.

Я чищу зубы каждое утро, но теперь у меня……… зубы.

Я одеваюсь утром, но теперь я……… моя одежда.

Я пью воду каждый день, но сейчас я……… вода.

Я покупаю хлеб каждый день, но теперь я … … … хлеб.

Я изучаю историю в школе, но я

Դասապլան-2

Ուսուցիչ՝ Նունե Ավետիսյան

| Առարկա՝ | | Ամսաթիվ | Կիսամյակ | Դասարան |
|---|---|---|---|---|
| | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ռուսաց լեզու | | 19.07.2022 | I | V |

| | |
|---|---|
| Թեմա՝ | Թվական անուն |
| Օգտագործվող նյութեր՝ | Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, թեստեր, բառարան |
| Դասի նպատակը՝ | Իմանալ – թվականների տեսակները ռուսերենով<br>Իմանալ – թվականների ճիշտ գրելու ձևը և արտասանությունը<br>Հաշվել – թվականները մինչև հազարն ռուսերենով |
| | Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ |
| Վերջնարդյունքները | Աշակերտները կկարողանան.<br>Հաշվել – թվականները մինչև հազարն ռուսերենով<br>Կատարել – գումարում և հանում գործողություններն ռուսերենով<br>Կարդալ – ճիշտ արտասանությամբ հատկապես դասական թվականները<br>Տարբերել – դասական և քանակական թվականները<br>Թարգմանել – թվականները հայերենից ռուսերեն և ռուսերենից հայերեն |

| Գործողություններ (ժամ/տևողություն) | Ուսումնական գործունեություն<br>Աշակերտներ | Ուսումնական գործունեություն<br>Ուսուցիչ | Հարցադրումներ | Կիրառվող երող (ներ) |
|---|---|---|---|---|
| 5րոպե – սկիզբ | Բացել դասագրքերը, պատրաստվել նոր | Ողջունել դասարանին, ն/ք: | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | դասին:Ներկայացնել տնային աճխատանfները | Ստուգել տնային աճխատանfները, բացատրել անհասկանալի մասերը | | |
| 10րոպե-ընթացf | Բոլոր աշակերտների մասնակցությամբ fննարկվեց տարբերակված թեստերի սխալները, որոնf գրվեցին գրատախտակին, հնչեցվեցին հետաfրfրող հարցերը, ստեղծվեց ,,հավելյալ,, գիտելիf<br>Պատասխանել հարցերին, տալ փոխադարձ հարցեր, հնչեցնել կարծիfներ, կատարել նշումներ տետրերում | Նախորդ դասաժամին գրված տարբերակված թեստերի fննարկում, սխալների fննարկում և բացատրում, բանավոր առաջ մղող հետադարձ կապի տրամադրում<br>Նոր թեմայի հաղորդում աշակերտների մասնակցությամբ | **1.**Ո՞րն է կոչվում թվական(հայերենում) և fանի՞ տեսակ են լինում թվականները<br>**2.**Ասեf մի fանի fանակական թվականներ և այն դարձրեf դասական թվական(ռուսերենով) | |
| **10** րոպե | | | **3.**Ինչպե՞ս ռուսերենով կարտասանեf | Հարցադրումների մեթոդ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 15րոպե | Տարբերակված ուսուցում: **А Б В Г Д** աշակերտների նկատմամբ<br><br>Բարձր առաջադիմության տեր աշակերտները կատարում են աշխատանք գրատախտակից և դասագրքից, իսկ ցածր առաջադիմության տեր աշակերտները թարգմանեցին տարբեր թվականներ բառարանի միջոցով, կատարեցին նշումներ և արտասանեցին թվականները | Թեման ամրապնդելու, ամփոփելու, ինչպես նաև ամբողջ դասարանի ներգրավվածությունը ապահովելու համար 6 միջին առաջադիմության տեր աշակերտների բաժանվեց տարբերակված<br><br>թեստեր 2 տարբերակով, բարձր առաջադիմության տեր աշակերտների հետ գրվեց 2 բարդ վարժություն, որից մեկը գրվեց գրատախտակին ուսուցչի կողմից , իսկ մյուսը առաջադրվեց դասագրքից, իսկ ցածր | թվականները մաթեմատիկական գործողություններով<br><br>4.Ո՞վ կարող է ասել իմ կողմից ինչեցվածթվականներ ը անգլերենով՝ օրինակ 106, 53, 572 և այլն<br><br>Տարբերակված թեստերը կցված են դասապլանի վերջում<br><br>Դասագիրք. էջ 25 վարժ. 4 | Տարբերակված ուսուցում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Յուրաքանչյուր աշակերտ կազմեց **1** նախադասություն իր իսկ կողմից ընտրված թվականով՝ իր կարողությանը համապատասխան | կարուղության տեր աշակերտների համար գրատախտակին գրվեց մի քանի թվական<br><br>Տրամադրվեց առաջ մղող բանավոր հետադարձ կապ և ուղղորդումներ<br><br>Թեման ամփոփվեց **1** կարճ նախադասությամբ<br><br>Թեստերի հավաքում**,** գնահատում**,** տնային աշխատանքի հանձնարարում | | ***T*–**աձև աղյուսակով վարժության կատարում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1րոպե<br><br>4րոպե-ավարտ | | | | |
| Տնային աշխատանք | Ինքնուրույն աշխատանք. իրենց ցանկությամբ ընտրել թվականներ՝ գրելով նրանց ճիշտ արտասանությամբ | | | |

## Тест-1

**1. Распределите числительные по колонкам и запишите их.**

Одиннадцать, тридцать, двадцать первый, семь, сто первый. двенадцатый, шесть, семнадцатый, девяностный, сто двадцать, один, тридцать, десятый

| **Количественные числительные.** | **Порядковые числительные.** |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |

## Тест-2

1. **Перепишите предложения. Цифры запишите словами.**

1. Араму 12 лет, он учится в 7 классе.
2. В нашем классе 15 мальчиков и 12 девочек.
3. Сегодня будет 20 градусов тепла.
4. Занятия начинаются в 9 часов утра.
5. Мне 12 лет, а моей младшей сестре -7.